ՀՀ պետական բյուջե-2011

ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում ավարտվել է ՀՀ 2011թ. պետական բյուջեի նախագծի քննարկումը: Առաջիկայում այն կշարունակվի խորհրդարանի լիագումար նիստում: Անցած տարիների փորձը վկայում է, որ շահագրգիռ քննարկման արդյունքում երկրի ֆինանսատնտեսական հիմնական փաստաթուղթը էապես կատարելագործվում է, դառնում ավելի նպատակասլաց ու իրատեսական: Բյուջե-2011-ի նախագծի առանձնահատկությունն այն է, որ փաստաթղթի հիմքում ընկած են միջնաժամկետ ծախսային ծրագրի ցուցանիշները:

Սույն ներդիրում տեղ գտած հրապարակումները համառոտ ներկայացնում են 2011թ. պետբյուջեի նախագծի տրամաբանությունը, հիմնական ուղղություններն ու սկզբունքները:

Բյուջեն սոցիալական ուղղվածություն ունի

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի ելույթը ՀՀ Ազգային ժողովի հանձնաժողովների համատեղ նիստում 2011 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ

Ես հակիրճ կներկայացնեմ ձեզ 2011թ. պետական բյուջեի նախագծի տրամաբանությունը և այն հիմնական սկզբունքները, որոնցով մենք ղեկավարվել ենք այդ նախագիծը կազմելիս:

Առաջին հերթին պետք է անդրադառնանք 2010 թ. ստեղծված իրավիճակին, այն ցուցանիշներին, որոնք այսօր ունենք և այն մակրոմիջավայրին, որով մենք պետք է ավարտենք 2010թ. բյուջեի կատարողականը: Առաջին հերթին պետք է նշել, որ ամենայն հավանականությամբ մենք կգերակատարենք 2010թ. պետական բյուջեն:

Այս պահին արդեն ունենք եկամտային մասով 40 մլրդ դրամ գերակատարում, ինչը հույս է ներշնչում, որ մենք կկարողանանք այդ մասով գերակատարել պետական բյուջեի ցուցանիշը, և, բնականաբար, հարկային մուտքերը վկայում են, որ ունենք ավելի բարձր տնտեսական աճ, քան կանխատեսում էինք 2010թ. բյուջեն նախագծելիս:

Հիշում եք, որ մենք բյուջեի հիմքում դրել ենք 1,2 տոկոս համախառն ներքին արդյունքի աճ, բայց ամենայն հավանականությամբ այս ցուցանիշը կգերազանցենք երկու անգամ և տարին կփակենք ավելի բարձր արդյունքով:

Առաջին հերթին դա պայմանավորված է այն հանգամանքով, որ համաշխարհային տնտեսության իրավիճակը 2010թ. փոխվել է 2009թ. համեմատ: Դա մեզ համար ստեղծել է ավելի բարենպաստ միջավայր՝ մեր տնտեսական ակտիվությունն ապահովելու առումով: Դա արձանագրել ենք համաշխարհային շուկաներում հումքի գների բարձրացմամբ, հիմնականում այն հումքի, որն արտահանում ենք, և, բնականաբար, դա արդյունաբերության և արտահանող ճյուղերի համար ստեղծել է ավելի բարենպաստ պայմաններ:

Երկրորդը՝ համաշխարհային տնտեսական իրավիճակը բարվոք է առաջին հերթին Չինաստանի, Հնդկաստանի, Բրազիլիայի և Ռուսաստանի տնտեսությունների կտրվածքով, որոնց տնտեսական աճը երկու անգամ գերազանցում է համաշխարհային տնտեսական աճի ցուցանիշը: Այդ առումով մեզ համար կարևոր է Ռուսաստանի տնտեսությունում ստեղծված իրավիճակը, քանի որ նրա ազդեցությունը մեր ընդհանուր տնտեսական, սոցիալական վիճակի վրա էական է: Այդ տեսակետից էլ մենք արձանագրում ենք դրական փոփոխություններ: Արդյունքում՝ մասնավոր ներդրումները, որոնք գալիս են Ռուսաստանից, ծրագրվածից ավելի բարձր են, ինչպես նաև մասնավոր տրանսֆերտները, որոնք նախորդ տարվա համեմատ ավելի բարձր են, գրանցել են մոտավորապես 25 տոկոսանոց աճ, ինչը նույնպես իր դրական ազդեցությունն է թողել ընդհանուր տնտեսության վիճակի վրա:

Երրորդ կարևորագույն գործոնը հակաճգնաժամային լայնածավալ միջոցառումներն են, որոնք իրականացրեցինք 2009թ. ընթացքում՝ մեծածավալ ծախսեր, կապիտալ ներդրումներ, Համաշխարհային բանկի և Ասիական զարգացման բանկի միջոցներով իրականացվող շինարարական աշխատանքներ, ինչպես նաև պետական բյուջեի դեֆիցիտի կտրուկ ավելացումը, որի շնորհիվ պետական բյուջեն եղավ ընդլայնողական, և, բնականաբար, դա ավելի բարենպաստ պայմաններ ստեղծեց ընդհանուր տնտեսական և համախառն ներքին արդյունքի աճի համար, ինչը և մենք արձանագրում ենք 2010 թվականին:

Կարևոր է, որ հիմնական աճ ունենք արդյունաբերությունում՝ 11, 5 տոկոս՝ ութ ամիսների կտրվածքով, էներգետիկայում՝ 17,1 տոկոս և ծառայություններում՝ 7,2 տոկոս: Կարևոր է, որ արտահանումն այս ամիսների ընթացքում աճել է 43,8 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 21,3 տոկոսով: Ցուցանիշները կարող էին լինել ավելի բարվոք, եթե մենք չարձանագրեինք աննախադեպ անկում, որ ունեցել ենք գյուղատնտեսության ոլորտում: Այն հասավ 18 տոկոսի, հետագայում սկսվեց փոքր վերականգնում, բայց ընդհանուր առմամբ կանխատեսում ենք, որ գյուղատնտեսությունում լինելու է անկումային տարի՝ հիմնականում պայմանավորված բնակլիմայական պայմաններով: Այս հենքի վրա էլ կառուցել ենք մեր հիմնական կանխատեսումները 2011թ. մակրոցուցանիշների առումով. մենք ենթադրում ենք, որ գյուղատնտեսությունում կլինի վերականգնում այս բավական ցածր բազայի վրա, կունենանք աճ իրական հատվածում՝ արդյունաբերությունում, էներգետիկայում: Ընդհանուր առմամբ այս ֆոնի վրա մենք կանխատեսում ենք 4,6 տոկոս համախառն ներքին արդյունքի աճ 2011 թ. համար:

2010-2011թթ. կարևորագույն մարտահրավերներից լինելու է բարձր գնաճը և բարձր գնաճի զսպումը, և դրան է ուղղված լինելու դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունը: Այս տարի մենք եղել ենք զսպող այն առումով, որ հավաքել ենք ավելի շատ հարկային մուտքեր, և եկամուտները պետական բյուջեում եղել են ավելին, իսկ

ծրագրված ծախսերն՝ ավելի քիչ: Արդյունքում բյուջետային դեֆիցիտը ծրագրվածից ավելի ցածր է լինելու, ինչը գնաճի վրա դրական ազդեցություն է թողնելու:

Միևնույն ժամանակ այս մակրոտնտեսական քաղաքականությունը նպաստելու է, որ երկարաժամկետ առումով մենք ստեղծում ենք ավելի բարվոք մակրոտնտեսական կայուն իրավիճակ, և արտաքին պարտքի տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքում լինելու է ավելի ցածր, քան մենք կանխատեսում էինք, և մոտակա տարիների համար մենք ավելի փոքր դեֆիցիտ ենք պլանավորում: Մասնավորապես, մյուս տարվա համար դեֆիցիտը չպետք է գերազանցի 4 տոկոսը: Դա նշանակում է, որ այն մտահոգությունները, որ հնչում էին, որ արտաքին պարտքի բեռը կարող է լինել մեծ մեր բյուջեի հետ համեմատած, այդ կանխատեսումները նույնպես ավելի բարվոք վիճակում են լինելու, քանի որ մենք ավելի կոշտ քաղաքականություն ենք իրականացնելու, քան ծրագրված էր նախկինում պետական բյուջեի դեֆիցիտի նվազեցման առումով: Առանձնահատկությունն այն է, որ մենք 2011 թ. բյուջեի նախագիծն արդեն իսկ կազմել ենք միջնաժամկետ ծախսային ծրագիրն ունենալով: Հիշում եք, որ ճգնաժամի պատճառով մենք Ազգային Ժողովից ստացանք թույլտվություն, որ 2009թ. լինելու է օպերատիվ կառավարման տարի, և մենք շեղվելու ենք միջնաժամկետ ծախսային ծրագրից, իսկ 2011-ից սկսած արդեն՝ մեր կանխատեսումների հիմքում ընկած են երեք տարվա կանխատեսման ցուցանիշները: Այդ ցուցանիշները մենք նաև կարողացել ենք համաձայնեցնել Արժույթի միջազգային հիմնադրամի հետ, Համաշխարհային բանկի հետ, մեր հիմնական դոնոր ընկերությունների հետ, որոնք նաև ապահովում են մեր պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը: 2010թ. առանձնահատկությունն այն է, որ մեծ ուշադրություն էինք դարձնում մեր տնտեսության կառուցվածքի դիվերսիֆիկացմանը և այս քաղաքականությունը, բնականաբար, իր դրական ազդեցությունը թողել է:

2011թ. հիմնական թիրախներն են լինելու.

Առաջինը՝ երկարաժամկետ մակրոտնտեսական կայունության ապահովումը, և պետական բյուջեն կազմվել է այդ տրամաբանությամբ: Մենք ավելի կոշտ մակրոտնտեսական ցուցանիշներ ենք դրել բյուջեի հիմքում, բյուջեի ավելի ցածր դեֆիցիտ: Բնականաբար, դա հնարավորություն է տալու մեզ կուտակել բավարար պահուստային միջոցներ անկանխատեսելի իրավիճակներում որոշակի զսպանակ ունենալու համար. դա մեր Կայունացման հիմնադրամն է, որը մենք ձևավորել ենք Կենտրոնական բանկում, դրանք նաև այն վարկային ռեսուրսներն են, որ մենք Կենտրոնական բանկի միջոցով տրամադրում ենք մասնավոր հատվածին՝ խթանելով տնտեսական աճը և դրանով իսկ խթանելով մակրոտնտեսական կայուն իրավիճակը: Ուզում եմ ձեզ տեղյակ պահել, որ մեր արտաքին պարտքի շուրջ 700 մլն դոլարը պարտք է, որը չի ծանրանալու պետական բյուջեի վրա: Այդ պարտքն սպասարկելու են մասնավոր ձեռնարկությունները, որովհետև այդ միջոցները հայ-գերմանական հիմնադրամի և ուղղակի վարկավորման միջոցով տրամադրված են մասնավոր հատվածին, և մասնավոր հատվածն էլ արդեն իսկ սկսել է այդ պարտքի մարումը: Այն բյուջետային պարտքերը, որ տրամադրել էինք հանքահումքային արդյունաբերությանը պետական բյուջեով, ամբողջությամբ ստացել ենք, և այն վարկերը, որ բյուջետային միջոցներով տրամադրել ենք մասնավոր հատվածին, նույնպես ամբողջ ծավալով այսօր սպասարկվում են: Սա նույնպես միջոցառում է, որն ապահովելու է մակրոտնտեսական կայունությունը:

Ընդհանուր առմամբ, եթե անդրադառնանք 2011 թ. մեր թիրախներին, մակրոտնտեսական կայունությունից հետո երկրորդ թիրախը լինելու է տնտեսության

դիվերսիֆիկացմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Մենք առաջին անգամ ներկայացնելու ենք մեր ինդուստրիալ քաղաքականության տրամաբանությունը, որն ուղղված է լինելու արտահանման խթանմանը, և կոնկրետ ծրագրեր են իրականացվելու այս բնագավառում, որոնք պարունակում են արտահանման խրախուսման մեխանիզմներ: Առաջին հերթին դա ուղղված է գյուղատնտեսության հումքի վերամշակմանը: Տեղյակ եք, որ "Զվարթնոց" միջազգային օդանավակայանում ստեղծելու ենք ազատ տնտեսական գոտի, որի նպատակն է լինելու մեծածախ առևտրով զբաղվող համաշխարհային բրենդներ բերել օդանավակայան և հենց տեղում իրականացնել գյուղմթերքների գնում, փաթեթավորում, լաբորատոր ստուգում, կազմակերպել սառնարանային տնտեսություն և գյուղմթերքների արտահանում օդանավակայանից: Այս ծրագիրն արդեն փետրվար-մարտ ամսին կսկսի աշխատել, քանի որ մեր կոնցեսիոներն արդեն իսկ իր ներդրումները կատարել է սառնարանային տնտեսության ձևավորման գործում, և փետրվարին կլինի սառնարանային տնտեսության շահագործման սկիզբը, իսկ տարվա ընթացքում նաև ձեզ կներկայացնենք լոգիստիկ սխեմաները:

Երկրորդ ուղղությունը՝ գյուղատնտեսության ոլորտում համատեղ պետական-մասնավոր ձեռնարկությունների ձևավորումն է, որոնք հիմնականում զբաղվելու են արտահանումով: Առաջին նախագիծը մենք սկսել ենք "Հայկական պանիր" ձեռնարկության ստեղծմամբ՝ բրենդի գրանցմամբ, լիցենզիաների ստացմամբ, ինչը հնարավորություն է տվել մեզ արդեն իսկ պանրի արտահանում իրականացնել Ռուսաստանի Դաշնություն, 2011-ից ենթադրվում է արտահանման ծավալների կտրուկ ավելացում: Գիտեք, որ ձկնաբուծության մեջ նույնպես համալիր միջոցառումներ են իրականացվում, որոնք խթանելու են ձկան արտահանումը: Այդ ծրագրով արդեն ութսուն տոննա արտահանվել է, իսկ 2011թ. արտահանման ծավալը 2010թ. համեմատ կկրկնապատկվի կամ նույնիսկ կեռապատկվի: Եվ կան նման պետություն-մասնավոր համագործակցության կոնկրետ նախագծեր, որոնց նպատակն է լինելու էապես ավելացնել արտահանման ծավալները:

Երրորդ ուղղությունը տուրիզմի զարգացումն է, որը, մեր գնահատականով, ունի մեծ ներուժ: Գիտեք, որ Մքքենզիի հետ համատեղ մշակված է մի բիզնես ծրագիր, որը հետևողականորեն իրականացնում ենք: Այդ ծրագրի առաջին փուլը վերաբերում էր Սյունիքի մարզին: Դրա սկիզբը դրեցինք հոկտեմբերի16-ին՝ բացելով Տաթևի համալիրը, ինչպես նաև ճոպանուղին, որն ունի միջազգային մեծ գրավչություն: Հաջորդ փուլը վերաբերելու է Ջերմուկին: Մի նոր ծրագիր, որը նույնպես իրականացնում ենք Մքքենզիի հետ, վերաբերում է տուրիզմի զարգացմանը՝ կապված Սևանում նոր միջազգային տուրիստական սպորտային համալիրի կառուցման հետ: Բիզնես ծրագիրն արդեն մշակվում է, և մեր գործընկերների գնահատականով, նրանք կկարողանան լուրջ ներդրողներ հրավիրել, որպեսզի տուրիզմի բնագավառում այս տարածաշրջանը նույնպես թափով զարգանա:

Ընդհանուր առմամբ, եթե խոսենք երրորդ թիրախի մասին, ապա այն բարեփոխումներին ավելի մեծ թափ հաղորդելն է: Հարկային վարչարարության տեսակետից էլեկտրոնային համակարգի ներդրումը մեծ թափ է ստանալու 2011 թվականին: Դրա համար ձեզ ներկայացնելու ենք և արդեն ներկայացրել ենք օրենսդրական նախաձեռնություններ, որոնք հնարավորություն են ստեղծում էլեկտրոնային եղանակով ներկայացնել հաշվետվությունները՝ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել ֆիզիկական շփումները հարկ վճարողի և հարկահավաքի միջև: Այդ ծրագիրը, որն արդեն

2010թ. դրված է շրջանառության մեջ, 2011թ. նաև օրենսդրական փոփոխությունների շնորհիվ մեծ թափ է ստանալու, և այդ առումով բարելավվելու է հարկային վարչարարությունը։

Բարեփոխման իմաստով էական նշանակություն են ունենալու փոքր ու միջին բիզնեսին տրվող նոր հնարավորությունները, մասնավորապես հաստատագրված վճարումից անցումը արտոնագրայինի՝ տարին մեկ անգամ վճարման։ Այդ օրենսդրական նախաձեռնությունն արդեն արժանացրել է Ազգային Ժողովի հավանությանը, և 2011թ. հունվարի 1-ից այն լիարժեք կսկսի աշխատել, որը փոքր և միջին բիզնեսով զբաղվող 18 ոլորտներում կստեղծի փոքր և միջին բիզնեսի զարգացման բարենպաստ պայմաններ։ Բարեփոխումների ուղղություններից մեկը, որ ես թվեցի, նպատակ ունի խթանելու տնտեսության դիվերսիֆիկացումը։ Այդ առումով նոր թափ է ստանալու Զարգացման հայկական գործակալությունը, որն այս պահին ունի 23 մշակված ծրագիր, որոնք կունենան միջազգային բովանդակություն։ Դրանք կոնկրետ ներդրումային ծրագրեր են՝ սկսած բազալտի վերամշակումից, որը ներկայացրել ենք մեր չինական գործընկերներին, և նրանք հետաքրքրություն ունեն այդ բիզնես ծրագրի նկատմամբ, ավարտած այն ծրագրով, որ իրականացնելու ենք ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության հետ՝ այրվող թերթաքարի բազայի հիման վրա ձեռնարկության ստեղծում. մենք ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալությունից ստանալու ենք դրամաշնորհային միջոցներ, որոնք ուղղվելու են բիզնես ծրագրի մշակմանը։ Եվ նման ևս 20 ծրագրեր, որոնք արդյունաբերությունում ունենալու են կոնկրետ արդյունքներ։

Սրանք են 2011թ. մեր հիմնական թիրախները։ Մեր բյուջետային կանխատեսումները, ելնելով այս ռազմավարությունից, ենթադրում են, որ պետական բյուջեի ընդհանուր եկամուտը կլինի 850 մլրդ դրամի շրջանակում։ Դա բավական լուրջ թիրախ է մեզ համար։ Ծախսային մասը կկազմի 998 մլրդ դրամ, բյուջետային դեֆիցիտը, ինչպես նշեցի, չի գերազանցի ՀՆԱ-ի 4 տոկոսը։

Մեր գնահատականով, եկամտային մասի ապահովման տեսակետից բավական լարված բյուջե է, բայց այն ռեզերվները, որ մենք ձևավորում ենք, լավատեսություն են ներշնչում այն առումով, որ կկարողանանք ամբողջությամբ կառավարել ռիսկերը, որոնք կարող են բացահայտվել 2011թ., եթե հանկարծ մակրոմիջավայրը լավը չլինի, կամ եթե համախառն ներքին արդյունքի աճը, որ կանխատեսում ենք (4.6 տոկոս), չկայանա։

Այնուամենայնիվ, 2011թ. սկզբին Կենտրոնական բանկում մեր միասնական հաշվի վրա կունենանք կուտակված բավարար ռեզերվներ, և բյուջեի կատարողականը 2011թ. այդ առումով ռիսկային չի լինի։ Այսինքն՝ այն ռիսկերը, որոնք դրված են այս նախագծի հիմքում, մեզ թույլ են տալիս գնահատել, որ դրանք կլինեն կառավարելի և կունենանք բավարար պաշարներ, որպեսզի մեր ծախսերն ամբողջությամբ կատարենք։ Բնականաբար, առաջին հերթին մեծ ուշադրություն ենք դարձնելու, որպեսզի մեր բանակի պաշտպանունակությունը բարձր մակարդակի վրա լինի։ Եթե ունենանք գերակատարում եկամտային մասով, բնականաբար, առաջին հերթին թիրախավորելու ենք բանակի անհրաժեշտ բոլոր ծախսերի կատարմանը՝ նույնիսկ կփորձենք նաև գերակատարել մեր ծրագրային մոտեցումները։

Երկրորդ կարևորագույն թիրախն այն է, որ բոլոր սոցիալական պարտավորությունները կատարվելու են, և այս տեսակետից բյուջեն կարելի է անվանել հստակ սոցիալական ուղղվածություն ունեցող բյուջե, որովհետև ավելացնելու ենք սոցիալական ծախսերը՝ հասցնելով աննախադեպ ծավալների։ Դա վերաբերում է և՛

սոցիալական նպաստներին, և՛ կենսաթոշակներին, և՛ առողջապահության ու կրթության ոլորտներին, որտեղ ներդնելու ենք մեծածավալ գումարներ։

Կարևոր նշանակություն են ունենալու բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները։ Դրանք հիմնականում դոնոր կազմակերպություններն են՝ Համաշխարհային բանկը և Ասիական զարգացման բանկը։ Գումարներն ուղղվելու են ենթակառուցվածքներին, կապիտալ ծախսերին, դպրոցաշինության, ճանապարհաշինության ոլորտներ։ Դրանք այնպիսի ծրագրեր են, որոնք խթանելու են համախառն ներքին արդյունքի աճը։

Շարունակելու ենք աղետի գոտու վերականգնման աշխատանքը՝ այն հասցնելով տրամաբանական ավարտին։ Շուրջ 17 մլրդ դրամ էլ ուղղվելու է աղետի գոտու վերականգնմանը, այսինքն՝ հանրապետության նախագահի նախընտրական խոստումն՝ աղետի գոտու 7000 անօթևան ընտանիքներին բնակարաններով ապահովելու ծրագիրը շարունակելու է ստանալ իր ֆինանսական միջոցները, և այն նույնպես ամբողջությամբ իրականացնելու ենք։

Իմ գործընկերներն ավելի մանրակրկիտ կներկայացնեն ձեզ ծախսերն ըստ ուղղությունների և ոլորտների ու կպատասխանեն ձեր հարցերին, բայց, կարծում եմ, ձեզ համար հասկանալի են դառնում բյուջեի ընդհանուր տրամաբանությունն այս մակրոտնտեսական ցուցանիշներով և այն թիրախները, որոնք մեր առջև դնում ենք 2011թ. համար՝ հիմնվելով այս բյուջեի և այն ֆինանսական միջոցների վրա, որոնք ստանալու ենք նաև մեր դոնոր կազմակերպություններից և դրամաշնորհներից։ Մասնավորապես մեծածավալ աշխատանքներ են սպասվում "Հազարամյակի մարտահրավեր"- հիմնադրամ Հայաստան" ծրագրի շրջանակում։ Մինչև 2011թ. սեպտեմբերը պետք է կատարենք շուրջ 90 մլն դոլարի շինարարական աշխատանք, որպեսզի մեզ տրամադրվող դրամաշնորհային միջոցներն ամբողջ ծավալով իրականացնենք։ Դա հիմնականում ոռոգման համակարգն է, գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ծրագրերն են, վարկային միջոցներն են, "Ջրից դեպի շուկա" հայտնի ծրագիրն է, որն իր դրական արդյունքն է թողնելու նաև գյուղատնտեսությունում ցուցանիշների վերականգնման առումով, քանի որ այս անկումը, որ ունեցել ենք 2010թ., 2011թ. մեր գնահատականներով կհաջողվի հաղթահարել։

Մենք ծրագրում ենք, որ 2011թ. գյուղատնտեսության ոլորտում առնվազն 11 տոկոսանոց աճ կունենանք։ Ռիսկային տարրերից պետք է նշել գնաճային ցուցանիշները. այս տարի դեֆլյատորը բավական բարձր է, և 2011թ. այն նույնպես պետք է լինի բարձր։ Վերջին երկու ամիսների արդյունքները վկայում են, որ մեզ կհաջողվի 2011թ. թիրախային ցուցանիշը ապահովել, այն է՝ 4 տոկոս, 1.5 տոկոսանոց միջակայքում։ Կարծում եմ՝ եթե հաջողվի, զսպելով գնաճը, պահպանել այս միտումները նաև նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, կհաջողվի իրատեսական դարձնել նաև 2011թ. գնաճային ցուցանիշը, որը կարևորագույն մարտահրավերներից է մեզ համար, որպեսզի կարողանանք ապահովել ոչ միայն մակրոտնտեսական կայունություն, այլ նաև սոցիալական բնագավառում ունենանք ավելի բարենպաստ միջավայր։

Հակաճգնաժամային քաղաքականությունից դեպի կայուն տնտեսական զարգացում

ՀՀ ֆինանսների նախարար Տիգրան Դավթյան
2011 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության գործունեության ծրագրի դրույթները և դրա իրականացումն ապահովող միջոցառումները, ինչպես նաև հաշվի առնելով ընթացիկ տարում արձանագրված տնտեսական զարգացման միտումները, ***2011թ. ՀՀ կառավարության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը հիմնականում ուղղված է լինելու հակաճգնաժամային քաղաքականությունից դեպի կայուն տնտեսական զարգացումը վերադառնալուն՝ իրականացնելով զարգացմանն ուղղված առաջնահերթ բարեփոխումներ:***

ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականությունը 2011թ.-ին նպատակաուղղված է լինելու տնտեսության դիվերսիֆիկացման խորացմանը և արտահանման կողմնորոշման ընդլայնմանը: **Խորացվելու է տնտեսական քաղաքականության սոցիալական ուղղվածությունը, էապես բարելավվելու՝ գործարար և ներդրումային միջավայրը, տնտեսական աճը ապահովելու համար**

բացահայտվելու և ներդրվելու են լրացուցիչ խթաններ՝ զուգահեռաբար իրականացնելով զարգացմանն ուղղված արդեն իսկ մեկնարկած բարեփոխումները: **2011թ.** իրականացվող առաջնահերթ միջոցառումներ կհանդիսանան գործարար և ներդրումային միջավայրի բարելավման խնդիրները, որոնք շարունակելու են մնալ ՀՀ կառավարության առաջնահերթ բարեփոխումների օրակարգում՝ առանցքային շեշտադրումն ուղղելով պետական-մասնավոր գործընկերության և կորպորատիվ կառավարման մշակույթի արմատավորմանն ու վարչարարական խոչընդոտների վերացմանը: “Բիզնես միջավայրի գերազանցության կենտրոն” համազգային նախագծով կշարունակվի Հայաստանը տարածաշրջանում գործարար և ներդրումային միջավայրի "գերազանցության կենտրոն" դարձնելու աշխատանքը:

Արտաքին առևտրի ոլորտում իրականացվող միջոցառումներն ուղղված կլինեն ՀՀ կառավարության որդեգրած արտաքին առևտրի ազատական սկզբունքի պահպանմանը, առևտրի և ծառայությունների ոլորտում՝ սպառողական շուկայում հավասար մրցակցային դաշտի ապահովմանը, միջազգային պահանջներին համապատասխանող սպառողների շահերի պաշտպանության համակարգի ձևավորմանը, գործարար էթիկայի կանոնների ու ստանդարտների ներդրմանը և այլն:

Տնտեսության ճյուղերի իրական աճը 2006-2011թթ. (ավելացված արժեքով)

	2006	2007	2008	2009	2010 հունվար հուլիս	2010	2011
	փաստ.	փաստ.	փաստ.	փաստ.	փաստ.	կանխ.	Կանխ.
Արդյունաբերություն	-2.5	2.8	2.1	-7.9	9.3	6.6	4.6
Գյուղատնտեսություն	0.5	10.4	3.3	-0.1	-22.6	-14.0	10
Շինարարություն	37.7	18.2	11.3	-42.3	7.5	1.7	2.0
Ծառայություններ	16.0	12.5	4.8	-0.1	4.4	4.0	3.9
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	14.9	35.9	17.1	-20.7	19.6	20.0	4.0
Ընդամենը ՀՆԱ	13.2	13.7	6.9	-14.2	4.0	2.7	4.6

Միջազգային ստանդարտներին համապատասխան զարգացած ենթակառուցվածք ձևավորելու ռազմավարական նպատակի համատեքստում առանցքային դերակատարում կունենա Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացումը, որը թույլ կտա երկրի հարավը կապել հյուսիսի հետ և ապահովել ելքը դեպի միջազգային շուկաներ:

Տարածքային տնտեսական զարգացման ոլորտի պետական քաղաքականությունը հիմնականում ուղղված կլինի զարգացման անհամաչափությունների համահարթեցմանը՝ մարզերում ենթակառուցվածքների զարգացման և բարձրարժեք ծառայությունների մատուցման միջոցով:

2011թ. ընթացքում կձեռնարկվեն ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծմանն ուղղված միջոցներ, կարևոր նշանակություն կտրվի գյուղական համայնքները քաղաքային համայնքներին կապող ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին:

Գծապատկերում ներկայացված են տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված և կանխատեսվող իրական աճին նպաստման չափերը:



ՀՀ ագրարային հատվածում կառավարության վարած քաղաքականությունը 2011թ. կնպատակաուղղվի գյուղատնտեսության և այն սպասարկող կառույցների, գյուղմթերք-

ների իրացման ու վերամշակման ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը: Դրա հիման վրա կստեղծվեն ագրոպարենային ոլորտում ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների մեղմման, հետագա զարգացման ու ընդլայնված վերարտադրության կազմակերպման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացման, գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար բարենպաստ պայմանների ստեղծման, հիմնական պարենամթերքների ինքնաբավության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացման պայմաններ:

Էներգետիկայի բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունը հետևողականորեն շարունակելու է նպատակաուղղվել ՀՀ էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացմանը՝ էներգամատակարարման հուսալիության ապահովմամբ, էներգախնայողության միջոցառումների լայնամասշտաբ ներդրմամբ և շրջակա միջավայրի պաշտպանության պահանջների կատարմամբ: Այս բնագավառի զարգացման հիմնարար ուղղություններն են լինելու միջուկային նոր էներգաբլոկի կառուցման աշխատանքների համակարգումը, սեփական վերականգնվող էներգապաշարների իրացումը, արտահանման կողմնորոշում ունեցող կայուն ու հուսալի էներգահամակարգի կառուցումը և տարածաշրջանային էներգահամակարգերի հետ ինտեգրումը:

ՀՀ 2011թ. պետական բյուջեի հատկացումների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրվող վարկային միջոցների հաշվին կմեկնարկեն Որոտանի ՀԷԿ-երի համակարգի վերազինման, Գյումրի-2 ենթակայանի վերականգնման ծրագրերը:

Հայ-ռուսական համատեղ "Մեծամորէներգաատոմ" Փակ Բաժնետիրական ընկերության կողմից 2011թ. կիրականացվեն միջուկային նոր էներգաբլոկի կառուցման նախապատրաստական աշխատանքները:

Սեփական միջոցների և դոնոր երկրների կողմից հատկացվող միջոցների հաշվին կշարունակվի Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության աստիճանի բարձրացմանն ուղղված աշխատանքը:

2011թ. ջրային տնտեսության բնագավառում կարևորվելու են անցած տարիների ընթացքում կատարված բարեփոխումը շարունակելու գործընթացը, ինչպես նաև ոլորտի զարգացման քաղաքականությունից բխող նոր հիմնախնդիրների լուծումները:

Տրանսպորտի և կապի բնագավառում 2011թ. իրականացվելիք քաղաքականության հիմնական նպատակը շարունակելու է մնալ փոխադրումների և հուսալի կապի իրականացման ապահովումը՝ գոյություն ունեցող ճանապարհների (երկաթուղային, ավտոմոբիլային) ամբողջական ու արդյունավետ օգտագործմամբ, ինչպես նաև հյուսիս-հարավ

ավտոմայրուղու և երկաթուղու շինարարությամբ ու կապի համակարգերի կատարելագործմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ Կենսական նշանակության ճանապարհների բարելավման երկրորդ ծրագրով 2011թ. նախատեսվում է վերականգնել շուրջ 148,7 կմ ճանապարհ:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրով 2011թ. նախատեսվում է վերականգնել գյուղական համայնքները հիմնական ավտոճանապարհային ցանցի հետ կապող շուրջ 33,5 կմ ճանապարհ, իսկ հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրով՝ վերակառուցել շուրջ 11.5 մլրդ. դրամի ճանապարհ:

«Ռուսական երկաթուղիներե ԲԲԸ կողմից կազմված տեխնիկական առաջադրանքի նախագծի հիման վրա 2011թ. նախատեսվում է սկսել հյուսիս-հարավ նոր երկաթուղու՝ Մեղրի-Սիսիան- Ջերմուկ-Մարտունի-Գավառ-Գագարին ուղղությամբ 313 կմ հատվածի շինարարության տեխնիկատնտեսական հիմնավորման աշխատանքը:

Շինարարության կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի



Շինարարության ոլորտում 2011թ. ընթացքում կարևորվում է կրթական, մարզական և մշակութային օբյեկտների կառուցման, հիմնանորոգման և վերակառուցման շարունակականության ապահովումը, ինչը կնպաստի կրթական համալիրի վերազինմանը, ուսման, մշակութային, մարզական կյանքի և անհրաժեշտ ծառայությունների մատուցման մակարդակի էական բարձրացմանը:

Գոյություն ունեցող պարտավորությունների համաձայն ՀՀ 2010թ. պետական բյուջեից ֆինանսավորված «Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար

բնակարանային շինարարությունե ծրագիրը ևս կկրի շարունակական բնույթ, ապահովելով երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարությունը Արագածոտնի և Շիրակի մարզերում։

2011թ. "Բնակարանային շինարարություն" ծախսային ծրագրով ՌԴ-ի վարկային միջոցների հաշվին աղետի գոտում շարունակվելու են 2009թ. սկսված Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասի Մարմաշենի 7-րդ, Մուշի 7-րդ փողոցներով պարփակված, Մուշի 5-րդ փողոցին հարակից տարածքների (1200 բնակարանների՝ այդ թվում՝ ավարտման ենթակա կիսակառույց շենքերի ավարտում), Անի թաղամասի Տրդատ ճարտարապետի փողոցին հարող տարածքների (400 բնակարանների) կառուցապատման, Ախուրյան գյուղում (182 բնակարանների) և Լոռու մարզի Սպիտակ քաղաքում (354 բնակարանների) երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանաշինության աշխատանքները։

<u>Բյուջե 2011-ի թիրախային նպատակները</u>

- երկարաժամկետ մակրոտնտեսական կայունության ապահովում
- տնտեսության դիվերսիֆիկացմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ արտահանման խթանում, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացում, համատեղ պետական-մասնավոր ձեռնարկությունների ձևավորում, տուրիզմի զարգացում
- բարեփոխումներին ավելի մեծ թափ հաղորդել, բարելավել հարկային վարչարարությունը
- փոքր ու միջին բիզնեսի զարգացման բարենպաստ պայմանների, հնարավորությունների ընդլայնում
- ներդրումային ծրագրերի լայն իրականացում

ՀՀ արտաքին քաղաքականության ոլորտի հիմնական խնդիրներն են համարվելու. Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ հանգուցալուծումը, Ռուսաստանի հետ դաշնակցային և ռազմավարական հարաբերությունների հետագա խորացումը, ԱՄՆ-ի հետ բարեկամական գործընկերության ամրապնդումը, Եվրոպական ընտանիքին մերձենալու արտաքին քաղաքական ուղեգծի իրականացումը, անմիջական հարևաններ Վրաստանի և Իրանի հետ հարաբերությունների հետագա զարգացումը և ամրապնդումը, հայ-թուրքական հարաբերությունների առանց նախապայմանի կարգավորումը և այլն։

Ոլորտի 2011թ. առաջնահերթ խնդիր է համարվելու **Հայաստան-Սփյուռք** գործակցության զարգացման հայեցակարգի դրույթների իրականացումը և այդ բնագավառում քաղաքականության համակարգումը:

Բյուջե 2011-ի ծախսային թիրախները

- երկրի պաշտպանունակության բարձր մակարդակի ապահովում
- սոցիալական պարտավորությունների գերակայություն. սոցիալական նպաստներին, կենսաթոշակներին, առողջապահության և կրթության ոլորտներին ուղղվող ծախսերի ծավալների ավելացում
- ենթակառուցվածքների զարգացում, կապիտալ ծախսերի ավելացում, դպրոցաշինության, ճանապարհաշինության ոլորտների զարգացում
- աղետի գոտու վերականգնման ծրագրերի շարունակություն

Կրթության ոլորտը շարունակում է մնալ որպես երկրի կայուն զարգացման, մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը: Այս ոլորտը ներկայումս երկրի զարգացման գերակայություններից է:

Գիտության ոլորտի 2011թ. գերակա խնդիրներն են լինելու հանրապետության գիտական և գիտատեխնիկական ներուժի զարգացումը, դրա ռացիոնալ տեղաբաշխումը և պահպանումը, գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը, հասարակության մտավոր ներուժի վերարտադրությունը, ինովացիոն (նորարարական) քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացին մասնակցությունը և այլն :

Առողջապահության ոլորտում իրականացվող բարեփոխումը ուղղված է լինելու համակարգի կազմակերպական ու կառուցվածքային վերափոխմանը, օրենսդրական դաշտի բարելավմանը, առողջապահության ֆինանսավորման համակարգի կատարելագործմանը, ոլորտի օպտիմալացմանը և արդիականացմանը, սեփականության բազմաձևության խթանմանը, արտաքին ու ներքին կապիտալի ներհոսքին, կրթական համակարգի արդիականացմանը, բժշկական օգնության կազմակերպման կատարելագործմանը: Առաջնային է դիտարկվում ոլորտի գործունեությունը կանոնակարգող "Առողջապահության մասին" և "Հանրային առողջության անվտանգության ապահովման մասին" ՀՀ օրենքների ընդունումը:

Սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղվող բյուջետային միջոցները *նախորդ տարվա նկատմամբ աճում են 27.4 մլրդ. դրամի չափով 2010 թվականի 244.6 մլրդ. դրամի դիմաց:* Ջանքերն առավել կկենտրոնացվեն աշխատաշուկայի լարվածության մեղմման, իրականացվող ծրագրերի հասցեականության մեծացման, ծառայությունների որակի ու մատչելիության բարձրացման ուղղությամբ: Կշարունակվի կենսաթոշակային համակարգի բարեփոխումը: Քայլեր կձեռնարկվեն սոցիալական պաշտպանության ծրագրերի միջոցով ժողովրդագրական իրավիճակի բարելավման ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեից հատկացումները, ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝

Բաժին	Խումբ	Դաս		Գումարը (հազար դրամներով)
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**998,597,459.2**
			այդ թվում	
01			ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**155,636,931.9**
02			ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	**140,613,772.8**
03			ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	**60,275,698.8**
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**97,094,761.0**
05			ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	**12,060,920.8**
06			ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**46,136,138.3**
07			ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	**62,498,293.0**
08			ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	**17,981,760.9**
09			ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	**108,495,777.7**
10			ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	**271,948,712.2**
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	**25,854,691.8**

Մշակույթի ոլորտի զարգացման հիմնական ուղղություններն են հանդիսանալու մշակութային ժառանգության (հուշարձաններ, մշակութային արժեքներ, ոչ նյութական մշակույթ) պահպանությունը, ժամանակակից արվեստի զարգացումը և տարածումը, մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության իրականացումը, գրքարվեստի և տառարվեստի զարգացումը, ազգային փոքրամասնությունների մշակույթի զարգացումը և այլն:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում իրականացվելու են օլիմպիական հերթափոխի և բարձրակարգ մարզիկների պատրաստմանը, բնակչության ֆիզիկական դաստիարակության ապահովմանը, ՀՀ-ում գործող մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների և ղեկավար կազմի սոցիալական վիճակի բարելավմանը, նրանց վերապատրաստմանը, ֆիզկուլտուրային-առողջարարական զանգվածային, հանրապետական և մարզային միջոցառումների անցկացմանը, հաշմանդամային սպորտին և այլն:

Բնապահպանության ոլորտում 2011թ. ՀՀ կառավարության կարևորագույն և գերակա նպատակներն են լինելու երկրի բնապահպանական իրավիճակի համակարգված

բարելավումը, հանրապետության շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական և բուսական աշխարհի, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների նվազեցումը և կանխարգելումը, բնական պաշարների պահպանության, վերականգնման, վերատադրության և արդյունավետ օգտագործման ապահովումը, ընդերքի և հողերի պահպանության ապահովումը, Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը, ՀՀ ջրի ազգային ծրագրի իրականացման ապահովումը, շրջակա միջավայրի վիճակի դիտարկման և ուսումնասիրության ապահովումը, շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելումը, վտանգավոր քիմիական ու ռադիոակտիվ նյութերի և թափոնների կառավարումը և այլն:

2011 թվականին հետևողականորեն շարունակվելու է բյուջեների կազմման բարեփոխումը՝ ծրագրային բյուջետավորման տարրերի արմատավորման և խորացման միջոցով:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (գումարը՝հազար դրամներով)

ԸՆԴԱՄԵՆԸ	849,983,484.0
այդ թվում՝	
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	650,000,000.0
Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	123,440,696.5
Պաշտոնական դրամաշնորհներ	53,988,927.5
Այլ եկամուտներ	22,553,860.0

2011թ. հարկային և մաքսային քաղաքականությունն ուղղված կլինի վերջին տարիներին վարվող քաղաքականության միտումների զարգացմանը: Մասնավորապես, կպարզեցվեն հարկ վճարողների հարկման և հաշվառման ընթացակարգերը, կնվազեցվի հարկերի վճարման հաճախականության եւ ներկայացվող հարկային հաշվետվությունների քանակը, աշխատանքներ կիրականացվեն հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարների՝ պետական բյուջեից վերադարձման մեխանիզմների կատարելագործման, նոր գերավճարների և ապառքների առաջացման կանխարգելման, ինչպես նաև հարկ վճարողների կողմից հարկային պարտավորությունների ինքնագնահատման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ և այլն:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող դեֆիցիտի գումարը ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով հաստատված և ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքներով փաստացի ձևավորված ցուցանիշների նկատմամբ նախատեսված է համապատասխանաբար՝ 44.8 մլրդ դրամ և 92.1 մլրդ դրամ նվազեցումով:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	**Գումարը (հազար դրամներով)**
ԸՆԴԱՄԵՆԸ	148,613,975.2
այդ թվում՝	
Ա. Ներքին աղբյուրներ	82,804,184.5
Բ. Արտաքին աղբյուրներ	65,809,790.7

"Ողջունելի են կառավարության ջանքերը բյուջեի պակասուրդի կրճատման և ֆինանսավորման ներքին աղբյուրների տեսակարար կշռի ավելացման առումով, ինչը հնարավորություն կտա առանց արտաքին պարտքերի բեռի էական աճի միջնաժամկետ հատվածում ապահովել տնտեսության կայուն զարգացում":

ՀՀ ԿԲ եզրակացությունից

Պետական գույքի կառավարման և մասնավորեցման ոլորտում 2011թ. նախատեսվում է ապահովել պետական գույքի կառավարման քաղաքականության շարունակությունը և գործող ծրագրի գործողության ժամկետում ավարտին հասցնել պետական գույքի մասնավորեցման հիմնական գործընթացը, բարձրացնել առևտրային կազմակերպությունների պետական բաժնեմասի կառավարման արդյունավետությունը և արդյունքում տեղական ու օտարերկրյա ներդրողների համար առավել գրավիչ դարձնել մասնավորեցվող օբյեկտների գրավչությունը, զարգացնել պետական գույքի հաշվառման ու գույքագրման համակարգը, շարունակել պետական գույքի նկատմամբ պետության սեփականության իրավունքների գրանցման աշխատանքը,

Անշարժ գույքի կադաստրի ոլորտում իրականացվող քաղաքականությունը ուղղված է լինելու պետական միասնական կադաստրի վարման համակարգի արդյունավետ

կառավարման ապահովմանը և դրա կառավարման արդյունավետ մեխանիզմների ներդրմանը:

Պետական վիճակագրության հիմնական խնդիրների և հիմնարար սկզբունքների ապահովման նպատակով 2011թ. մասնավորապես նախատեսվում է վիճակագրության միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանման համատեքստում շարունակել վիճակագրության ինստիտուցիոնալ վերափոխման գործընթացը, վիճակագրական մեթոդաբանության շարունակական կատարելագործման, միջազգային չափանիշների հետ դրա ներդաշնակեցման ու միասնականացման, ինչպես նաև վիճակագրական ցուցանիշների միջազգային համադրելիության ապահովման նպատակով շարունակել և ընդլայնել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության միջազգային համագործակցությունը եւ այլն:

2011թ. **հասարակական կարգի պահպանություն** ոլորտում շարունակվելու է բարեփոխումը հասարակական կարգի պահպանման, հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման, ոստիկանության կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի և մատչելիության, գործունեության թափանցիկության ապահովման, բնակչության վստահության ամրապնդման ուղղությամբ:

ՀՀ կառավարության տեղեկատվության և հասարակայնության

հետ կապերի վարչություն

ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվության և

հասարակայնության հետ կապերի բաժին

Տնտեսական բարեփոխումների վերլուծական-

տեղեկատվական կենտրոն

Տպաքանակը՝ 5.000 օրինակ